

ԲՆԱԿԱՆ ԵՐԵՒՅԹՑԱՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ



ԿԿՈՒ Մանկապատանեկան թերթիկ

ՓԵՏՐՈՒԱՐ - 2024

Թիւ - 8



Թիւր պատրաստեց՝
Մարտի Աշում-Ծաշնեալ
Նկարագարդեց՝
ՌԱՖՖԻ ՔԵԾԻՉԵԱԼ

Ի՞նչ է ՓՈԹՈՐԻԿԸ:

Փոթորիկ կ'անուանենք յանկարծ պոռթկացող քամին, որ յաճախ պատճառ կը դառնայ օօրաւոր վնասներու, կը հարուածէ շինութիւնները, կը ջարդէ եւ նոյնիսկ արմատահան կ'ընէ ծառերը: Այս ահեղ բնական երեւյթը կրնայ տեւել քանի մը վայրկեանեն մինչեւ 1,5 ժամ: Փոթորիկը սովորաբար կը յառաջանայ պաղ եւ տաք օդերու բախման ժամանակ, որուն հետեւանքով վեր կը բարձրանայ եւ սառելով անձեւաբեր ամպեր կը գոյացնէ: Անձեւեն ալ գետին կը թափին տեղատարափ անձեւ, ձիւն կամ նոյնիսկ կարկուտ: Փոթորկածին ամպը հեռուեն նկատելի կ'ըլլայ: Այսօր գիտնականները արդէն կրնան որոշել այն շրջանները, որոնց տարածքով պիտի անցնի փոթորիկը, եւ նախօրօք կը զգուշացնեն բնակիչները:

ԱՐԵԳԱԿԸ Ո՞Ւ ԿԸ ԳԻԾԵՐԵ:

Ինչո՞ւ ցերեկը արեւը պայծառ կը շողայ, իսկ երեկոյեան կ'անհետանայ եւ կը մթնի: Երականութեան մեջ արեւը չի շարժիր: Մեր մոլորակը մշտական շարժումի մեջ է, 24 ժամուան ընթացքին ինքն իր շուրջ մեկ ամբողջական պտոյտ գործելով: Ահա եւ այսպէս մը կը թուի, որ երբ երկրին մեկ կողմը արեւուն կը նայի՝ այստեղ ցերեկ կ'ըլլայ, իսկ միւս կողմը, որ արեւուն չի նայիր՝ գիշեր կ'ըլլայ:


Ի՞նչի՞ ՄԱՍԻՆ ԿԸ ԽՕՍԻՆ ԶՐԱՓՈՍԵՐՈՒ
ՎՐԱՅ ԳՏՆՈՒՈՂ ՊԴՊԶԱԿՆԵՐԸ:

Առիթ ունեցե՞ր եք արդեօք, տեսնելու թէ ինչպէս ամառնային տաք անձրեւին ժամանակ շրափոսերու մեջ բազմաթիւ պղպջակներ կը յայտնուին: Անձրեւին կաթիլները հարուածելով ջուրին մակերեսը՝ անմիջապէս ետ կը ցատկեն: Անոր արդիւնքով գոյացած այդ բարակ շրային թաղանթը կը նմանի գմբեթի մը (հովանոցի նման), որուն տակ օդ կ'ըլլայ: Ահա այդպէս ալ շրափոսերուն մեջ պղպջակները կը յայտնուին:

Ի՞նչ է ՄԱՌԱԽՈՒՈՒԾ (ՄՃՈՒԾ):

Մառախուղը ամպ է, ոչ միայն երկնքի մեջ, այլեւ երկրի մակերեւոյթին մօտ: Այսպէս կ'երեւի, որ կարծես սպիտակ ծածկոց մը իշած ըլլայ երկրին վրայ եւ պատած շրջապատը գտնուող բոլոր տունները, մարդիկը, մեքենաները...

Մառախուղը քաղաքին մեջ սովորաբար աւելի խիտ կ'ըլլայ, քան գիւղը, որովհետեւ քաղաքին օդը աւելի ապականած կ'ըլլայ՝ փոշիներէն, գործարաններու եւ ինքնաշարժներու արտադրած նիւթերէն: Մառախուղը կը յառաջանայ առաւտ կանուխ կամ գիշերները, երբ օդին պաղ հոսանքները ցած կ'իջնեն եւ կը հանդիպի հողին կամ ջուրի տաք մակերեսին, որոնք դեռ սառած չեն ըլլար:



Գունաւոր է՝
հետեւեալ պատկերը
և այս սիրած
գոյներովի:




ԽԱՂԵՐ

Թիւերը յաջորդաբար միացնելով
ամբողջացո՞ւր պատկերը:


Կրնա՞ս լուծել:

$$\begin{array}{rcl} \text{Watermelon slice} & + & \text{Watermelon slice} = 8 \\ \text{Lemon} & + & \text{Watermelon slice} = 6 \\ \text{Lemon} & + & \text{Banana} = 5 \\ \text{Watermelon slice} & + & \text{Banana} = ? \end{array}$$

Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:



2





բանաստեղութիւն

ԱՉԱՏՈՒԹԻՒՆ

Միքայէլ Նալպանտեան

Ազատն Աստուած այն օրէն,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին .
Կենդանութիւն պարզելել,
Ես անբարբար մէկ մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրորոցին մէջ կապուած,
Ես կու լայի անդադար
Մօրս քունը խանգարած,
Կը խնդրէի ես իրմէ
Բազուկներս արձակել.
Ես այն օրէն ուխտեցի
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապերն
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնեն
Խնդացին ու բերկրացան,
Միակ խօսքը որ ըսի
Չեր հայր, կամ մայր, կամ այլ բան,
Ազատութիւն դուրս թռաւ
Իմ մանկական բերանեն:



ԱՆԻՐԱՒՄԱՐԴԸ

Մեծահարուստ մը իր տունը վարձով կու տայ
աղքատի մը եւ զայն կողոպտել ուզելով տան մէջ
կը ձգէ ամաններ, որոնցմէ քանի մը հատը ձեթով լեցուն էին,
իսկ միւսները՝ կիսատ: Երբ տունը վերադարձնելու ժամը
կը հասնի, մեծահարուստը կու զայ ստուգելու ամանները:
Կիսատ ամանները ցոյց տալով աղքատը գողութեամբ
կը մեղադրէ: Երբ աղքատը դատարան կը կանչուի,
փրկուելու այլ ելք չի գտնուիր, բացի՝ հատուցուելն: Մէկը,
որուն անունը տնանկներու ապաւն էր, աղքատը մէկ կողմ
կը քաշէ ու կը հարցնէ անոր.

- Անմե՞ղ ես, թէ՞ պարտապան:
- Անմեղ եմ,- կը պատասխանէ ան:

Ապա անոր հետ կը վերադառնայ դատարան եւ
յամառօրէն կը պահանջէ, որ չափէն ամանները աւելցնելով,
որ եթէ կիսատ ամաններուն մէջ նոյնքան մրուր գտնուի,
որքան լեցուն ամաններուն մէջ՝ աղքատը թող
փոխհատուցէ, իսկ եթէ ոչ թող ազատ արձակուի: Եւ
կը պարզուի, որ կարասները կիսատ էին: Այսպիսով,
աղքատը ազատ կ'արձակուի, իսկ մեծահարուստը
կը դատապարտուի: